Երանի՜ հազար բերան արդարոցն աւուր գալըստեան:

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ
(ՏԱՂ ԱԴԱՄԱՅ ՊԻՒԼՊԻՒԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ)

Ա.

Մեր Տէրն ի դրախտըն երեկ, Ադամայ ձայնեց թէ՝ Ո՞ւր ես.
Ադամ ի դարխտէն ի դուրս զայս ասաց թէ՝ «Մերկիկ եմ ես.
Իմ Տէ՛ր, ես քեզնէ կ'ուզեմ որ զԵւա ու զօձն անիծես.
Նոքա խաբեցին ըզիս, ի լուսոյն մօրմերկացայ ես,
Պըտղոյն ինձ ուտել տըւին 'ւ ի քենէ արին սեւերես:
Իմ Տէ՛ր, այն հողուն եմ ես՝ քո ձեռօքդ զիս ստեղծեալ ես.
Սատանան ցաւեցոյց զիս, կու խընդրեմ՝ ցաւըս փարատես.
Քան ըզջուր ճապաղ եղայ, կ'աղաչեմ որ զիս ժողովես,
Ժողվես ու խշիշան լընուս, քո աջո՛վըդ մատնահարես:
Իմ Տէ՛ր, կորուսեալ եմ ես, ակն ունիմ որ զիս գըտանես.
Անմեղ ի յաշխարհս եկի ու մեղօք կ'երթամ սեւերես.
Անզերծ վըտանգի դիպայ 'ւ անդէնին հըրոյն ազատես:

Բ.

Օրհնեա՛ լ Աստուծոյ անուն որ զբարեաց դըռուին է բացեր,
Զաշխարհս գեղեցիկ ստեղծեր ու երեք դիմաց բաժաներ,
Ըզհրեշտակսն յերկինս դասեր 'ւ Ադամայ դըրախտն է տըւեր,
Զերկիր անիծից գազնոց 'ւ անասնոց այս տեղ է շիներ:

Գ.

Քան զԱդամ այլ ի՞նչ հարուստ, որ ունէր ըզդրախտն առանձին.
Սատանայ ի օձ մըտաւ, օձն յԵւա, զԱդամ խաբեցին,
Ի պըտղոյն ուտել տըւին, ի փառա՛ցըն մերկացուցին,
Տերեւ թըզենւոյն տըւին, ի դրախտէն հանին վարեցին:

Դ.

Ի յերկնաւորաց դասուց Սադայէլ զերեսն էր շըրջել,
Ի յերկնից յանդունդ իջեր 'ւ ի լուսոյն խաւար մընացել,
ԶԱդամ ի դրախտէն հաներ 'ւ անասնոց երկիրն է ձըգել,
'Ի ամենքս Ադամայ որդիքս՝ եմք յօտար երկիրս բընակել: